

Լոռու մարզպետարան  
մարզպետ՝ Անդրեյ Ղուկասյանին

«Վելես» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝  
Դավիթ Գյուրջյանից  
Հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

22.10.2018թ.

Հարցում

Հարգելի պարոն Ղուկասյան,  
Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով՝ վստահորդիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը.

1. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է (ողջ անձնակազմի իմաստով) սեռական ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում արական և իգական սեռի ներկայացուցիչների հավասար ներգրավվածության ապահովման տեսանկյունից:
  - 1.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
  - 1.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը (տոկոսային հարաբերակցությամբ և թվային ցուցանիշներով):
2. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածության հնարավորությունը:
  - 2.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում սահմանափակ կարողություններով անձանց ներգրավվածության հնարավորությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
  - 2.2. Արդյո՞ք պետական կամ մասնավոր ջգակցությամբ, ծրագրերի միջոցով երբևէ նախաձեռնվել է մարզպետարանի աշխատակազմում սահմանափակ ունակություններով անձանց ներգրավումը:

31 10 18

- 2.3. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում սահմանափակ կարողություններով անձանց թիվը:
3. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածության ապահովման տեսանկյունից:
- 3.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում ՀՀ հիմնական (մեծաքանակ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
- 3.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը թվային ցուցանիշով:
4. Արդյո՞ք մարզպետարանի աշխատակազմում ապահովվում է ազգությամբ հայ, սակայն այլ երկրի քաղաքացի հանդիսացող՝ հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներառականությունը, հատկապես՝ աշխատակազմում վերջիններիս ներգրավվածության համար հավասար պայմանների ապահովման տեսանկյունից:
- 4.1. Արդյո՞ք մարզպետարանն ունի ներքին կամ գերատեսչական մակարդակով գործող իրավական ակտ, որը (կամ դրա որոշ դրույթներ) միտված է ապահովելու աշխատակազմում հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներգրավվածությունը, եթե այո, ապա խնդրում ենք նշել դրա անվանումն ու հայտնել համացանցային ռեսուրսը, որից հնարավոր է այն ներբեռնել կամ տրամադրել այդ իրավական ակտը թղթային տարբերակով:
- 4.2. Մարզպետարանի աշխատակազմում որքան է՞ կազմում հայկական սփյուռքի ներկայացուցիչների ներգրավվածությունը թվային ցուցանիշով:

Կից ներկայացվում են.

1. «Վելես» հասարակական կազմակերպության կողմից Դ.Գյուրջյանին տրված լիազորագիրը.
2. Դավիթ Գյուրջյանի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

«Վելես» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ՝

Դավիթ Գյուրջյան